



Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա

2013 թվականի գործունեության

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԱԽԱԲԱՆ.....	3
II. ՆՊԱՏԱԿ I. Կառավարում և վարչարարություն.....	4
III.ՆՊԱՏԱԿ II. Մասնագիտությունների կրթական ծրագրեր .....	6
IV.ՆՊԱՏԱԿ III. Որակի ապահովում.....	9
V. ՆՊԱՏԱԿ IV. Հետազոտություն.....	10
VI.ՆՊԱՏԱԿ V. Միջազգային կապեր.....	12
VII.ՆՊԱՏԱԿ VI. Հասարակայնության հետ կապեր.....	14
VIII.ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ .....	15
IX.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ .....	16
X. ԵԶՐԱՓՈՎԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	19



## I. ՆԱԽԱԲԱՆ

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան (այսուհետ՝ ԵԳՊԱ) սույն փաստաթղթով ներկայացնում է 2013 թվականի գործունեության և ֆինանսական համառոտ հաշվետվությունը:

Հաշվետու տարին արդյունավետ էր ԵԳՊԱ-ի համար: Սույն թվականի հուլիսի 16-ին տեղի ունեցավ ռեկտորի ընտրությունը: ԵԳՊԱ-ի ռեկտոր Արամ Իսաբեկյանը վերընտրվեց և ներկայացրեց բարեփոխումների նոր հայեցակարգ՝ շեշտադրելով զարգացման այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են՝

- ԵԳՊԱ-ի կառավարման նոր մոտեցումների որդեգրում,
- ԵԳՊԱ-ի մասնագիտական կրթական ծրագրերի վերանայում, ուսանողակենտրոն ուսուցման որդեգրում՝ ՄԿԾ-ների ուսումնառության վերջնարդյունքային մոտեցման միջոցով,
- ԵԳՊԱ-ի կողմից տրամադրած ուսուցման միջազգային ճանաչում՝ որակի ապահովման միջոցով, տեղական հավատարմագրում ինստիտուցիոնալ մակարդակով, ՄԿԾ-ների հավատարմագրում միջազգային կառույցների կողմից,
- Հետազոտության ուղղությունների վերանայում, հստակեցում և հետագա զարգացում:
- Ծառայություն հասարակությանը՝ ցուցահանդեսների կազմակերպման և մեծահասակների կրթություն տրամադրելու միջոցով,
- ԵԳՊԱ-ի գրավչության բարձրացում,
- ԵԳՊԱ ուսանողների ուսուցմանը նպաստող միջավայրի բարելավում,
- ԵԳՊԱ-ի միջազգայնացում:

Վերը նշված նախաձեռնությունները հաջողությամբ և արդյունավետ իրականացնելու համար ԵԳՊԱ-ում վերանայվել, հաստատվել և կիրառվում են մի շարք նոր փաստաթղթեր՝ միտված բուհի կառավարման համակարգի, ինչպես նաև ուսումնագիտական գործընթացի բարելավմանը:

Ընդհանուր առմամբ, 2013 թվականը կարելի է բնութագրել ԵԳՊԱ-ի համար զգալի փոփոխությունների և հաջողությունների տարի, քանզի հիմնավոր քայլեր են ձեռնարկվել ԵԳՊԱ-ում բազմաբնույթ բարեփոխումներ իրականացնելու համար, ինչպես նաև բուհի կառավարման նոր մոտեցումների և որակի մշակույթի ձևավորման գործում: Մասնավորապես, հարկ է առանձնացնել այն



քայլերը, որոնք միտված են եղել վերը նշված նպատակներին հասնելու համար տարբեր աղբյուրներից միջոցներ ձեռքբերելուն:

Սույն փաստաթուղթը ներկայացնում է ԵԳՊԱ-ի գործողությունները և ֆինանսական հաշվետվությունը՝ ըստ 2013 թվականի ռեկտորի ընտրության հայեցակարգում նշված դրույթների:

## **II. ՆՊԱՏԱԿ I.Կառավարում և վարչարարություն**

Բուհի արդյունավետ կառավարումը հաստատության հաջողությունների կարևորագույն գրավականներից է: Միջազգային մակարդակում ՀՀ կրթությունը տեսանելի դարձնելու ձգտումը անհնար է դարձնում կառավարման հին մոտեցումներով առաջնորդվելը: Բարձրագույն կրթության մատուցման նոր մեթոդները պահանջում են կառավարման նոր մոտեցումներ թե՛ ՄԿԾ-ների իրականացման, և թե՛ այլ ծառայությունների մատուցման գործում: Կառավարման մոտեցման վերանայումը արդեն մոտ երկու տարի է, ինչ իրականացվում է ԵԳՊԱ-ում, որի կարևորագույն սկզբունքներն են ուսանողակենտրոն մոտեցումը, որակյալ կրթությունը, թափանցիկությունը, հաշվետվողականության ապահովումը:

Ուսանողակենտրոն միջավայր ստեղծելու նպատակով խորն ուսումնասիրվել են վերջինիս տարրերը թե՛ արտասահմանյան բուհերի հետ համեմատական վերլուծություն կատարելով, թե՛ ԵԳՊԱ-ի ներքին գործոնների խորքային վերլուծության միջոցով: Վերհանված խնդիրների հիման վրա վերանայվել են ԵԳՊԱ-ի ուսումնառություն և հետազոտություն իրականացնող մոտեցումները այդ երկու գործընթացներն ուսանողների համար էլ ավելի օգտակար դարձնելու նպատակով:

Կառավարման հաջողության գրավականներից է թափանցիկության ապահովումը: Արդեն երկու տարի է, ինչ կառավարման առաջնային խնդիրներից է ստեղծել փաստաթղթային համապատասխան հենք ԵԳՊԱ-ի գործողությունները թափանցիկ դարձնելու նպատակով: Այսպիսի մոտեցում է ցուցաբերվում ԵԳՊԱ-ի բոլոր գործընթացներին (ուսումնառություն, ուսանողների գնահատում, բյուջեի կառավարում և կառավարման այլ ոլորտներ):

ԵԳՊԱ-ն ձեռնարկել է կարևորագույն քայլեր բուհի կառավարումը արդիականացնելու և այն միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու համար:



Առաջին հերթին, կարևորելով արդյունավետ կառավարումը, ԵԳՊԱ-ն Եվրոմիության Տեմպուսի շրջանակներում մշակեց դրամաշնորհային եռամյա «Կառավարում» ծրագիր: Այդ ծրագրի շրջանակներում Եվրոպական մի շարք առաջատար բուհերի հետ համագործակցության շնորհիվ (Լյուվենի համալսարան (Բելգիա), Բաֆ Սպա համալսարան (Մեծ Բրիտանիա), Կոբլենց-Լանդաուի համալսարանը (Գերմանիա), ինչպես նաև ASIIN հավատարմագրման գործակալությունը (Գերմանիա) կարդիականացվեն կառավարման մոտեցումները: ԵԳՊԱ-ն այս ծրագրի համակարգողն է, ինչը, իր հերթին, կնպաստի բուհի ներուժի զարգացմանը: Ծրագիրը նպատակ ունի փոփոխություններ իրականացնել բուհի կառավարման երեք մակարդակներում՝ կառավարման վերին օղակ, վարչակազմ, ինչպես նաև դեկաններ, ամբիոնի վարիչներ և ուսումնական վարչություն: Նախապատրաստական քայլերն արդեն ձեռնակվել են և 2014 թվականի հունվարին տեղի կունենա Եվրոպական փորձագետների առաջին այցը ԵԳՊԱ: Հայաստանում ամերիկյան համալսարանը նույնպես ներգրավված է ծրագրում՝ որպես ՀՀ-ում լավագույն փորձի օրինակ :

Երկրորդ, սույն թվականին ստեղծվել և արդեն ակտիվ գործունեություն է ծավալում «Մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության կառավարման» կենտրոնը: Կենտրոնի աշխատանքների շրջանակներում ներդրվել է «Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը», որը տեղեկատվության հավաքագրման հուսալի միջոց է: Սույն համակարգի շնորհիվ կատարվող վերլուծությունները հիմք են նաև որոշումներ կայացնելու համար:

Բացի այդ, ակտիվ աշխատանքներ են տարվել դրամաշնորհային ծրագրերի ուղղությամբ՝ միտված անձնակազմի տարբեր մակարդակների ներուժի զարգացմանը: Ներկայումս ԵԳՊԱ-ն մասնակցում է Տեմպուսի չորս ծրագրում և ղեկավարում է Տեմպուսի մեկ ծրագիր: Դրանք են՝

- **Կառավարում (GOVERN)**. միտված է Բոլոնիայի սկզբունքներին համապատասխան բուհերի կառավարման համակարգի վերանայմանը,
- **ՊԻԿԱՍԱ (PICASA)**. միտված է բուհի տարբեր գործընթացների միջազգայնացմանը,
- **ԷՍՊԱԿ (ESPAQ)**. միտված է ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավվածության բարձրացմանը;
- **ՎԵՐԻՏԱՍ (VERITAS)**. միտված է Զալցբուրգի սկզբունքների հիման վրա Որակավորումների ազգային շրջանակ-ի 8-րդ մակարդակի (հետազոտող) կառուցվածքային զարգացմանը;
- **ՇԼՍՅՆ (ALIGN)**. միտված է մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների ազգային շրջանակների միջև համապատասխանության խթանմանը:



Ինչպես երևում է, բոլոր հինգ ծրագրերը միտված են բուհի կառավարմանը և զարգացման տարբեր ոլորտներին և բարեփոխումների խթանման համար լավագույն միջոց են:

### III. ՆՊԱՏԱԿ II. Մասնագիտությունների կրթական ծրագրեր

#### ա. Ուսանողների վիճակագրական տվյալներ

2013-2014 ուս.տարվա ընդունելության արդյունքները կարելի է համարել բավականին հաջող, որի մասին են վկայում բազմաթանակ դիմումները: Մրցույթի արդյունքում, ընդհանուր առմամբ, ընդունելության տվյալները հետևյալն են՝

#### *Բակալավրի կրթական ծրագիր*

	պետ. պատվեր	Վճարովի	ընդամենը
Երևան	49	128	177
Գյումրի	14	26	40
Դիլիջան	3	1	4

#### *Մագիստրոսի կրթական ծրագիր*

	պետ. պատվեր	Վճարովի	ընդամենը
Երևան	21	51	72
Գյումրի	2	5	7



ԵԳՊԱ-ի ուսանողների ընդհանուր թիվը.

*Բակալավրի կրթական ծրագիր*

	պետ. պատվեր	Վճարովի	ընդամենը
Երևան	187	424	611
Գյումրի	34	94	128
Դիլիջան	11	14	25

*Մագիստրոսի կրթական ծրագիր*

	պետ. պատվեր	Վճարովի	ընդամենը
Երևան	41	100	141
Գյումրի	5	13	18

**Բ. Ուսումնական գործընթացներ**

Անդրադառնալով ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ հարկ է նշել, որ զգալի աշխատանքներ են տարվել մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ: Հատկապես՝

- մշակվել են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական պլանների նոր ձևաչափեր,
- մշակվել և հաստատվել են ԵԳՊԱ-ում իրականացվող 8 մասնագիտությունների գծով բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով նոր ուսումնական պլանները,
- առաջին կուրսեցիների համար վերանայվել են բակալավրի և մագիստրոսական ծրագրերը՝ հիմք ընդունելով Որակավորումների ազգային շրջանակը և տվյալ ծրագրերին բնորոշ ուսումնառության արդյունքները,
- առաջին կուրսի բոլոր դասընթացների համար մշակվել են դասընթացի նկարագրերը:



Ավելին, 2013 թվականին մշակվել և հաստատվել է ուսանողների գնահատման նոր համակարգը: Այն ունի երկու կարևորագույն առավելություն՝

- առաջին. այն համահունչ է միջազգային համընդհանուր ընդունված չափորոշիչներին և ապահովում է ուսանողների կողմից ուսումնառության արդյունքների գնահատումը գիտելիքների, հմտությունների և կարողությունների տեսանկյունից;
- երկրորդ. նոր գնահատման համակարգը տրամադրում է հստակ ուղենիշներ դասախոսների, ինչպես նաև ուսանողների համար, քանի որ այն ներկայացնում է գնահատման հստակ մոտեցումները, մեթոդաբանությունը, սկզբունքները և չափորոշիչները: Այն նաև գրագողության դեմ պայքարի գործիք է, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար կիրառելի հենք:

Գնահատման համակարգն արդյունավետ կիրառելու նպատակով մշակվել է հատուկ էլեկտրոնային ծրագիր:

Հիմք ընդունելով ուսումնառության արդյունքների հիման վրա վերանայված մասնագիտական կրթական ծրագրերը, գնահատման նոր համակարգը և նոր մշակված ընթացակարգերը՝ առաջին անգամ մշակվել է ուսանողի ձեռնարկ, որը յուրաքանչյուր տարի կթարմացվի և կտրամադրվի բոլոր առաջին կուրսեցիներին՝ որպես ուղեցույց:

Ավելին, ԵԳՊԱ-ն դիմել է ՀՀ Նորարարությունների մրցակցային հիմնադրամին դրամաշնորհային առաջարկով՝ հիմնովին լրամշակել և միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնել չորս մասնագիտության կրթական ծրագիր՝ Դիզայն, Համակարգչային գեղարվեստական նախագծում, Կիրառական արվեստ, Հագուստի մոդելավորում: Ներկայացված ծրագրի շնորհիվ ամբողջովին վերազինվում են չորս համապատասխան լաբորատորիաներ: Ծրագրի ավարտին այս մասնագիտությունները պատրաստ կլինեն թե՛ ազգային, թե՛ միջազգային հավատարմագրմանը:

Բացի այդ, մշակվել են մի շարք ընթացակարգեր ուսումնառության այս նոր գործընթացներն արդյունավետ կազմակերպելու համար:

Անդրադառնալով ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպմանը՝ պետք է նշել, որ 2013թ պրակտիկան անցկացվել է ԵԳՊԱ-ի լաբորատորիաներում և համապատասխան մասնագիտական կազմակերպություններում, կնքվել է պրակտիկայի անցկացման 16 պայմանագիր (Երևանի 13 և Գյումրու 3 ուսանողների պրակտիկական կազմակերպելու համար):





## **Գ. Որակավորումներ**

Սույն տարվա ընթացքում ՀՀ ԿԳՆ-ում շարունակվում էին որակավորումների խոշորացման աշխատանքները, որում իր ակտիվ մասնակցությունն է ունեցել նաև ԵԳՊԱ-ն: Ավելին, Որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ) արձագանքելու համար ԵԳՊԱ-ում շարունակում է գործել մասնագիտությունների կրթական ծրագրերը վերանայող հանձնաժողով, որը զբաղվում է ուսումնառության վերջնարդյունքների մշակմամբ: Այդ հանձնաժողովի աշխատանքների շրջանակը ենթադրում է ՄԿԾ-ների վերանայում և շուկայի պահանջներին համապատասխանեցում: Այդպիսի մոտեցումը կերաշխավորի ԵԳՊԱ-ի և մասնաճյուղերի կողմից առաջարկվող մասնագիտությունների ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանեցումը ՈԱՇ-ին, ինչը դյուրին կդարձնի բուհի ինտեգրումը Բարձրագույն կրթության Եվրոպական տարածք: Նախատեսվում է ՄԿԾ-ների կառավարման նոր մոտեցումների որդեգրում միասնական և կրկնակի աստիճանների շնորհման համար:

## **IV. ՆՊԱՏԱԿ III. Որակի ապահովում**

Որակյալ կրթություն տրամադրելու համար արդեն երկու տարի է, ինչ ԵԳՊԱ-ն մշակում է որակի ապահովման համակարգ թե՛ սեփական նախաձեռնությամբ, թե՛ Տեմպուսի ու Համաշխարհային բանկի միջոցներով: Արդեն երկրորդ տարին է, ինչ ՀՀ ԿԳՆ-ի «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում անցկացվում է որակի ապահովման համակարգի ներդրում: ԵԳՊԱ-ի բյուջեից նույնպես հատկացվել են որոշակի միջոցներ՝ որակի ապահովման նախաձեռնություններին օժանդակելու համար:

Սույն տարվա ընթացքում ուսումնական գործընթանցների որակը բարելավելու համար ստեղծվել է ինքնավերլուծություն իրականացնող հանձնաժողով: Ինքնավերլուծության աշխատանքներն արդյունավետ և հավաստի իրականացնելու նպատակով ՈԱ կենտրոնը վերջին տարվա ընթացքում մշակել է մի շարք հարցաթերթեր՝ շահակիցների շրջանում ակադեմիայի աշխատանքների արդյունավետությունը գնահատելու համար:



Մշակված հարցաթերթերի հիման վրա կատարվել են հետևյալ վերլուծությունները՝

- ԵԳՊԱ-ում առկա ռեսուրսների արդյունավետություն (հարցում դասախոսների և ուսանողների շրջանում),
- մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) արդյունավետություն (հարցում գործատուների, շրջանավարտների, ուսանողների /նախատեսվում է/ շրջանում),
- գնահատման քաղաքականության արդյունավետություն (հարցում դասախոսների և ուսանողների շրջանում),
- վարչարարության արդյունավետություն (հարցում դասախոսների շրջանում),
- դիմորդների տեղեկացվածության գնահատում (հարցում դիմորդների շրջանում),
- ԵԳՊԱ-ի ընդունելության կարգի արդյունավետության գնահատում (հարցում 1 –ին կուրսեցիների շրջանում):

Վերը նշված վերլուծությունների արդյունքները 2014 թվականի գործողությունների պլանի մշակման հիմք են:

Աշխատակիցների կատարողականի գնահատման և բարելավման ուղղությամբ ԵԳՊԱ-ում մշակվել է նաև աշխատակիցների կատարողականը գնահատող գործիք, որը կփորձարկվի հաջորդ տարի:

Որակի ապահովման գործընթացների արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը տարածվում է շահակիցների լայն շրջանակներում բազմաթիվ հաղիպումների միջոցով:

## V. ՆՊԱՏԱԿ IV. Հետազոտություն

Հետազոտության ոլորտում 2013թ. ընթացքում կատարվել են բավականին լուրջ աշխատանքներ: Հրատարակվել են արվեստագիտության դոկտոր, պրոֆեսորներ Վիգեն Ղազարյանի և Հրավարդ Հակոբյանի «ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», ինչպես նաև պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Հակոբ Սիմոնյանի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» գիտական աշխատությունները:



Ակադեմիայի արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի 8 դասախոս զեկուցումներով հանդես են եկել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի 70-ամյակին նվիրված հայագիտական միջազգային երկրորդ համաժողովում:

«Հայագիտության ներածություն» դասընթացի շրջանակներում հրավիրվել և դասախոսություններ են կարդացել այնպիսի անվանի հայագետներ, ինչպիսիք են Մայքլ Սթոունը /Երուսաղեմ/, Գաբրիելա Ուլուիոջանը /Իտալիա/, Վարդան Մատթեոսյանը /ԱՄՆ/ և այլոք:

Գիտահետազոտություն և ուսումնական պրոցես կապի շրջանակներում արվեստագիտության թեկնածու, դոցենտ Վարդան Ազատյանը զեկուցումով հանդես է եկել ակադեմիայի ուսանողության համար՝ ներկայացնելով իր վերջին գիտական հետազոտությունները, մասնավորապես՝ իր «ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» գիրքը:

2013 թ.-ն արդյունավետ է եղել նաև երիտասարդ հետազոտողների համար: «Բաց Հասարակություն» հինադրամի կողմից կազմակերպված ակադեմիական կրթաթոշակի մրցույթում արվեստագիտության ամբիոնի 1 դասախոս շահել է դրամաշնորհ և 9 ամսով մեկնել է ԱՄՆ Բոստոն քաղաքի համալսարան՝ հետազոտություն կատարելու:

Ընթացիկ տարում ակադեմիայի 2 ասպիրանտ հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական թեզեր և ստացել են արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:

ԵԳՊԱ-ի ուսանողների թե քակալվր, և թե մագիստրոս ուսումնագիտական աշխատանքները կարգավորելու նպատակով մշակվել է քակալվրի և մագիստրոսի թեզի մշակման ուղենիշներ: Ուղենիշները հստակ նկարագրում են այն ձեռքբերումները, որոնք ուսանողները պետք է ցուցաբերեն թեզի մշակման և պաշտպանության ժամանակ: Ուսանողների և թեզերի ղեկավարների այս ձեռնարկը կնպաստի ուսանողների ուսումնագիտական աշխատանքների կանոնակարգմանը և արդյունավետությանը: Արվեստաբանների համար գործող նախկին ձեռնարկը նույնպես կմիանա այս ձեռնարկին՝ ԵԳՊԱ-ի թեզերի աշխատանքների կազմակերպման և պաշտպանության պահանջները սահմանող մի համապարփակ ուղեցույց ստեղծելու համար:

Ներկայումս ակադեմիայում սովորում է 9 ասպիրանտ, որոնցից 3-ը արտասահմանցի են:

2013թ. ԵԳՊԱ-ի 4 դասախոսի շնորհիվ է պրոֆեսորի, 1 դասախոսի՝ դոցենտի գիտական կոչում:



## VI. ՆՊԱՏԱԿ V. Միջազգային կապեր


ԵԳՊԱ-ն միջազգային հարաբերությունների ուղղությամբ ծավալել է հետևյալ աշխատանքները, որոնք միտված էին ռազմավարական ուղղությունների իրականացմանը՝

- ուսանողների շարժունությունն ապահովող ծառայությունների տրամադրում,
- կրթաթոշակների և այլ դրամաշնորհային ֆոնդերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- միջազգային համագործակցություն այլ կազմակերպությունների և բուհերի հետ,
- միջազգային ծրագրերի իրականացում,
- ԵԳՊԱ-ի մասնակցությունը տարբեր ցուցահանդեսներում, արվեստի հետ կապված այլ միջոցառումներում:

Ուսանողների շարժունությունը ապահովելու նպատակով մշակվել են համապատասխան գործիքներ, ինչպիսիք են եռակողմ պայմանագիրը, ինչպես նաև ուսանողի ուղեցույցը՝ արտերկրում ուսմանը ծանոթանալու համար:

Նախորդ տարիների համեմատ նկատվում է արտասահմանցի դիմորդների հոսքի նվազում: Արտասահմանցի ուսանողների հոսքը երաշխավորելու համար անհրաժեշտ է ապահովել համապատասխան պայմաններ, ինչի ուղղությամբ ԵԳՊԱ-ն նախաձեռնել է համապատասխան քայլեր ՊԻԿԱՍՍ դրամաշնորհային ծրագիր, Եվրոմիության և Համաշխարհային բանկի ծրագրի միջոցով:

Ընդհանուր առմամբ, 2013-14 ուս.տարվա արտասահմանցի ուսանողները կազմում են 12 %, որից 7%-ը Ասիայից, 4%-ը՝ ԱՊՀ երկրներից, 1%-ը՝ Եվրոպայից:



Անդրադառնալով արտասահման մեկնող ուսանողներին՝ պետք է նշել, որ ուսանողների փոխանակումը հիմնականում ընթանում է Ֆրանսիական ուսումնական հաստատությունների



(Մարսելի գեղարվեստի բարձրագույն դպրոց, Ռեյմսի դիզայնի և արվեստի բարձրագույն դպրոց, Լիոն քաղաքի գեղարվեստի ազգային դպրոց), Սանկտ-Պետերբուրգի Շտիգլիցի անվ.գեղարվեստ-արդյունաբերական ակադեմիայի հետ, առկա ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում: 2013-14 ուս. տարվա 1-ին կիսամյակում, նշված համաձայնագրերի շրջանակներում, ուսումը շարունակելու նպատակով 1 ուսանող մեկնել է Ֆրանսիա, 3-ը՝ Ռուսաստան (Մոսկվայի Բուրգանով կենտրոնի կողմից կազմակերպված սիմպոզիումին, Սանկտ-Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստ-արդյունաբերական ակադեմիա):

Միջազգային համագործակցությանը նպաստելու նպատակով կնքվել են պայմանագրեր արվեստի օտարերկրյա 16 բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, որոնք վերաբերվում են պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակմանը, համատեղ թեմատիկ ցուցահանդեսների, համաժողովների, աշխատաժողովների կազմակերպմանը: Միջազգային համագործակցությունը հիմնականում տեղի է ունենում Ֆրանսիայի, Չեխիայի, Իտալիայի, Սլովակիայի, Լատվիայի, Էստոնիայի, Գերմանիայի և ԱՊՀ երկրների հետ:

Ընթացիկ տարում նույնպես ԵԳՊԱ-ն ակտիվ մասնակցություն է ունեցել Եվրամիության կողմից իրականացվող Տեմպուս ծրագրերին.

- հաջողությամբ ավարտին է հասել HESDeSPI ծրագիրը, որը միտված էր Բարձրագույն կրթության համակարգի մշակմանը՝ սոցիալական գործընկերության բարելավման և հումանիտար գիտությունների մրցունակության նպատակով:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի զարգացման ուղղությամբ իրականացվել են մի շարք գործողություններ.

- փորձի փոխանակում և համագործակցության կապերի հաստատում Լատվիայի և Բելոռուսի գեղարվեստի ակադեմիայի, ինչպես նաև Լե Մանսի գեղարվեստի բարձրագույն դպրոցի մասնագետների հետ
- ակտիվ մասնակցություն տարբեր միջազգային և տարածաշրջանային միջոցառումներին, ինչպիսիք են Տեմպուսի, Էրազմուս մունդուսի ծրագրերը և այլն:

Միջազգային մակարդակով ԵԳՊԱ-ն մասնակցել է տարբեր ցուցահանդեսների և արվեստի մի շարք միջոցառումների:



Գրանցվել են հետևյալ հաղթանակները՝

- 2013թ. մայիսին Նովոսիբիրսկում կայացած **Դելփյան խաղեր** մրցույթում «Հագուստի մոդելավորում» մասնագիտության կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Նելլի Սերոբյանը **«Հագուստի դիզայն»** անվանակարգում գրավել է 3-րդ տեղը (արծաթե մեդալ) և ստացել դիպլոմ ազգային զարդանախշը գրագետ և էսթետիկ ներկայացնելու համար:
- 2012թ.-ին **Թաթևոսյան-Լոնդոն ընկերության** կազմակերպած մրցույթի **«Զարդերի լավագույն դիզայն»** անվանակարգում հաղթող ճանաչվելուց հետո, ԵԳՊԱ ուսանողի էսքիզները դրվել են արտադրության :

Սույն տարվա նվաճումների ցանկում նույնպես կարելի է գրանցել ամուր համագործակցության կապերի ստեղծումը Վրաստանի Թբիլիսիի Ապոլոն Քույթաթելաձեի անվան արվեստների պետական ակադեմիայի հետ: Համագործակցության շրջանակներում կազմակերպվեց Թբիլիսի բուհի ուսանողների և դասախոսների ցուցահանդես Հայաստանում: Պատասխան այց կիրականացվի Վրաստան 2014 թվականի գարնանը:

2013թ. դեկտեմբեր ամսին մասնակցել ենք Սանկտ-Պետերբուրգում կազմակերպված միջազգային մշակութային 2-րդ համաժողովին: Մասնակցությունը համաժողովին սվեց նոր համագործակցությունների, նոր գաղափարների, ինչպես նաև համեմատական վերլուծության, փորձի փոխանակման հեռանկարներ: Ստորագրվեցին համագործակցության հուշագրեր Բելոռուսի և Լատվիայի գեղարվեստի ակադեմիաների հետ:

## VII. ՆՊԱՏԱԿ VI. Հասարակայնության հետ կապեր

Հասարակայնության հետ կապերի ոլորտում բուհում և Գյումրու մասնաճյուղում իրականացվել է 30 ցուցահանդես՝ (11-ը Գյումրու մասնաճյուղում), 16 շնորհանդես՝ (6-ը Գյումրու մասնաճյուղում): Նշված միջոցառումները լուսաբանվել են ԵԳՊԱ-ի պաշտոնական կայքում, մամուլում, հեռուստատեսությամբ, ռադիոյով և սոցիալական կայքերում:

ԵԳՊԱ-ի և նրա մասնաճյուղերի 2012-2013 ուս. տարվա դիպլոմային աշխատանքների պաշտպանությունները նկարահանվել են պատկերների և տեսահոլովակների ձևով: Նյութերը մշակվել են համակարգչային գրաֆիկական ծրագրերով և օնլայն ներկայացվել հանրությանը:



Հատուկ գովազդային աշխատանքներ են տարվել (շնորհանդեսների ձևով) Երևանի երեք ավագ դպրոցներում՝ 2014-2015 ուսումնական տարվա ընդունելության կարգի և պայմանների լուսաբանման ուղղությամբ: Այս գործընթացը շարունակական կլինի նաև 2014 թվականին:

### VIII. ՀԱԿԱԿՈՒՌԻՊՏԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հիմք ընդունելով 2009-2013 թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և իրականացման ծրագիրը՝ ԵԳՊԱ-ն ներկայումս իրականացնում է հակակոռուպցիոն միջոցառումների ցանկը, որը միտված է կոռուպցիայի դեմ անհանդուրժողական միջավայրի ստեղծմանը:

Միջոցառումների ծրագիրը միտված է ԵԳՊԱ-ի գործառույթների և հատկապես հակակոռուպցիոն ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ թափանցիկության ապահովմանը և այն պարզաբանում է ԵԳՊԱ-ի կողմից որդեգրած նոր մոտեցումները այդ խնդիրները լուծելու համար: Այդ ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ն որդեգրել է այնպիսի մոտեցումներ, որոնք

- կկանխարգելեն կոռուպցիայի ցանկացած տեսակի դրսևորումը,
- կնպաստեն կոռուպցիայի ցանկացած տեսակի բացահայտմանը,
- կսահմանեն կոռուպցիայի պատճառները՝ վեր հանելով պարզ և արդյունավետ ուղիները:

Հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի թիրախում գտնվում են հետևյալ ոլորտները, որոնք համարվում են առավել խոցելի կոռուպցիայի արտահայտման համար՝

- ընդունելության, ավարտական և միջանկյալ քննություններ,
- ուսումնական մասի գործողություններ,
  1. ուսանողների հեռացման, փոխանակման, շարժունության և վերականգման հետ կապված խնդիրներ,
  2. ուսանողների գնահատման հետ կապված խնդիրներ,
- աշխատատեղերի համալրման խնդիրներ և աշխատանքային այլ հարաբերություններ,
- ֆինանսատնտեսական հարցերի հետ կապված խնդիրներ, ինչպիսիք են՝ գնումները և ֆինանսական այլ գործողությունները:



Միջոցառումների հակակոռուպցիոն ծրագրի գործողությունների իրականացումը կարելի է բնութագրել արդյունավետ: Հատկապես այդ ծրագրի իրականացումը արտահայտվել է մի շարք կարգերի և ընթացակարգերի մշակման և ներդրման միջոցով, ինչը ԵԳՊԱ –ի գործունեությունը դարձնում է էլ ավելի թափանցիկ:

Այսպիսով մշակվել են.

- ԵԳՊԱ-ի ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ,
- ԵԳՊԱ-ի բակալավրի կրթական ծրագրով ընդունելության ներքին քննությունների անցկացման կարգ,
- ԵԳՊԱ-ի մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ,
- Ուսումնառության արդյունքների գնահատման վրա հիմնված ԵԳՊԱ-ի ուսանողների գնահատման նոր համակարգ,
- Ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածության կազմման նոր ձևաչափ,
- Ուսանողի ձեռնարկ:

Լրամշակվել են.

- ԵԳՊԱ-ի ընդունելության առարկայական ծրագրերը և գնահատման չափանիշները,
- ԵԳՊԱ-ի բակալավրի կրթական ծրագրով նախատեսված պետական ամփոփիչ քննությունների հարցաշարերը բոլոր 8 մասնագիտությունների համար:

Միջոցառումների սույն ցանկը տարածվում է նաև Գյումրու և Դիլիջանի մասնաճյուղերի վրա:

## **IX. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Լինելով պետական հաստատություն և ձևավորելով բյուջեն թե պետական և թե հասարակության կողմից տրամադրվող ֆինանսներից՝ ԵԳՊԱ-ն այդ ֆինանսները բաշխելիս հաշվետու է հասարակությանը և կառավարությանը:

2013 թվականին ԵԳՊԱ-ի եկամուտները ձևավորվել են պետ.բյուջեի հատկացումներից և ուսանողների վարձավճարներից: ԵԳՊԱ-ի ծախսերը կատարվում են ըստ կազմած նախահաշվի, որը կազմվում է հիմք ընդունելով ամբիոններից ստացած պահանջագրերը: Հատուկ տողով գումար է հատկացվում ուսանողական խորհրդին՝ ցուցահանդեսների, քաղաքից դուրս էտյուդների





կազմակերպման համար: Բժշկական ապահովագրություն ունեցող բոլոր աշխատակիցների համար  
ակադեմիան վճարվում է ապահովագրական գումարի 60%-ը:

### ՄՈՒՏՔԵՐ

**538,887,800**


1	Պետ. բյուջե	195,645,000	36.3%
2	Ուս. վճար	304,838,800	56.6%
3	Նախ. վճար	19,793,000	3.7%
4	Այլ մուտքեր	8,611,000	3.5%

### ԾԱԽՍԵՐ

**530,363,000**


1	Աշխատավարձ	429,175,000	80.9%
2	Պետական հարկեր	4,173,000	0.8%
3	Գնումներ	23,675,300	4.5%
4	Ծառայություններ	48,512,900	9.1%
5	Գործուղում	4,228,000	0.8%
6	Կրթաթոշակ	17,804,200	3.4%
7	Այլ ծախսեր	2,794,600	0.5%

### ՄՈՒՏՔԵՐ





## ԾԱԽՍԵՐ



Ուսումնական գործընթացի արդյունավետությունը ապահովելու համար 2013 թվականին ԵԳՊԱ-ի առաջին և երկրորդ մասնաշենքերում կատարվել են շենքի պահպանման աշխատանքներ, ԵԳՊԱ-ն համալրվել է ուսումնական գույքով, ձեռք են բերվել սարքեր և սարքավորումներ, գրադարանը հագեցվել է մասնագիտական գրականությամբ:

Գյումրու մասնաճյուղի ֆինանսատնտեսական գործառնությունները վարվում են տարեկան պլանավորման՝ ըստ անհրաժեշտ, օգտակար և այլ ծախսերի: Այդ թվում անհրաժեշտ ծախսեր են՝ աշխատավարձերը և սոցիալական պարտավորությունները պետության և աշխատակիցների հանդեպ, ինչը կազմում է ընդհանուր բյուջեի 81%-ը, նաև պահանջվող գրասենյակային պարագաները, կոմունալ ծախսերի հատվածները: Առանձին կետով վճարումներ են կատարվում գույքի և սարքավորումների, տրանսպորտային, գործուղումների, ընթացիկ վերանորոգումների համար: Այս ամենը վկայում են, որ մասնաճյուղն իր ունեցած միջոցները ծախսում է դինամիկ համամասնությամբ, չնայած չի կարողանում իրականացնել զարգացման և հեռանկարային ծախսեր: Այս կարգի ծախսերի համար բուհը նախատեսում է ընդլայնել ու զարգացնել համագործակցական հովանավորչական և դրամաշնորհային ծրագրերն ու նախագծերը:



## X. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՑԹՆԵՐ

Այսպիսով, կարելի է նշել, որ 2013 թվականը եղել է բավականին արդյունավետ թե կառավարման համակարգի, և թե ուսումնական գործընթացի բարելավման տեսանկյունից: ԵԳՊԱ-ն բավականաչափ ներդրումներ է իրականացրել բուհի զարգացման ուղղությամբ:

Սակայն, բավականին լուրջ մարտահրավեր են առաջանում, երբ խոսքը գնում է միջազգային չափանիշներին համահունչ կրթության տրամադրմանը: Չնայած արտաքին աղբյուրներից ռեսուրսների ձեռքբերման հարցում ԵԳՊԱ-ի բոլոր ջանքերին՝ դեռ առկա են շոշափելի խնդիրներ հիմնականում հետևյալ հարցերում՝

- ԵԳՊԱ-ի ֆիզիկական տարածքի վերանորոգում և համապատասխան հարմարությունների ստեղծում,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստում,
- շենքային պայմանների ընդլայնում:

Ամփոփելով՝ ԵԳՊԱ-ն միշտ պատրաստակամ է և անընդատ ձգտում է բարելավել ուսումնագիտական ծառայությունների որակը և կշարունակի աշխատել նշված մարտահրավերները հաղթահարելու համար: